# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**21 հուլիսի 2025 թվականի N 353-Ա**

**«ՀԱՐԹԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՎԵՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՈՒՀԻ ԳԱՅԱՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Հարթաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ն. Պողոսյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ եմ.**

1. «Հարթաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նվեր Պողոսյանին 2025 թվականի հուլիսի 22-ից օգոստոսի 15-ը ներառյալ տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 19 աշխատանքային օր:

2. Ն. Պողոսյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Հարթաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության գրադարանավարուհի Գայանե Զաքարյանին:

Recoverable Signature

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN HAYK 1302840382

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2025թ. հուլիսի 21
ք.Կապան